

ԲԱԺԻՆ 6. ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԸ (ՄԻԳՐԱՑԻԱ)

Մեթոդաբանական պարզաբանումներ

Համաձայն մարդահամարների անցկացման մեթոդաբանական դրույթների տվյալ բնակավայրում անձի բնակվելու անընդհատությունը կախված չի եղել գրանցման առկայությունից, դրա բնույթից (մշտական կամ ժամանակավոր) և նույն բնակավայրի սահմաններում՝ հասցեի փոփոխությունից:

Տվյալ բնակավայրում բնակչության բնակվելու անընդհատությունը խախտված չի համարվել.

- միևնույն տարածքի (նախկին վարչական շրջանի) սահմաններում մի գյուղական բնակավայրից մյուսը տեղափոխվելու դեպքում,
- քաղաքի/գյուղի սահմանում հասցեափոխության դեպքում,
- տվյալ բնակավայրից ժամկետային զինծառայության և արտերկիր կարճաժամկետ (մինչև 1 տարի) գործուղման մեկնելու դեպքում,
- **1 տարուց պակաս ժամկետով** տվյալ բնակավայրից բոլոր այն մեկնումների դեպքում, որոնք կապված չեն եղել մշտական բնակավայրը փոխելու հետ (ծառայողական գործուղումներ, մեկնումներ հանգստի, հարազատների, բարեկամների և ծանոթների մոտ և այլն):

Մնացած բոլոր դեպքերում, այդ թվում՝ միևնույն տարածքի (նախկին վարչական շրջանի) սահմաններում **գյուղական բնակավայրից քաղաք**, կամ հակառակը, ինչպես նաև միևնույն տարածքի մի **քաղաքից մեկ այլ քաղաք** տեղափոխությունների դեպքում, անձի տվյալ բնակավայրում բնակվելու անընդհատությունը համարվել է խախտված:

